



Բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնի /Երևանի Օրհուս կենտրոն/

գործունեության տարեկան Ն³ Բ1 »i í áðÁłáóŸ
2011Ă.

Երևանի Օրհուս կենտրոնը 2011թ. աշխատանքային գործունեությունը սկսել է հունվարի 10-ից:

Կենտրոնը իրականացնում է էկոլոգիական տեղեկատվության հավաքագրում, բազայավորում, տրամադրում ըստ պահանջի և տարածում շահագրգիռ կողմերի միջև՝ նպաստելով էկոլոգիական տեղեկատվության հասանելիությանը: Տեղեկատվությունը հասարակայնությանը առավել մատչելի դարձնելու նպատակով կազմակերպվում են տեղեկատվական սեմինարներ, էկոկրթության և էկոդաստիարակության մակարդակի բարձրացմանը նպաստող միջոցառումներ, մամլո ասուլիսներ, շնորհանդեսներ, գործնական աշխատանքներ (ծառատունկ, տարածքի մաքրում և այլն), միջազգային էկոլոգիական օրերի նշում և այլն:

Կենտրոնը հանդիսանալով նաև կապող օղակ պետական և ոչ պետական կառույցների միջև շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող խնդիրների շուրջ կազմակերպում է կլոր սեղաններ, հանրային քննարկումներ և նմանատիպ այլ միջոցառումներ:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնում տեղի են ունեցել հետևյալ միջոցառումները.

ՀՕՁԹԵՅ՝ 1

Տեղի ունեցած միջոցառումները			
տիպը	քանակը	մասնակիցների թիվը	
Սեմինարներ (դասընթացներ, էկոկրթ. միջ., էկ. օրեր, իրազեկման սեմինար՝ այդ թվում արդ. մատչ. սեմինարներ)	24	1211	
Կլոր սեղան-քննարկումներ (հանրային քննարկումներ, մամլո ասուլիսներ)	15	511	
Հասարակական լսումներ (մասնակցություն և աջակցություն)	2	-	
Աշխատանքային հանդիպումներ	29	-	

	Փորձագետների խորհրդի նիստեր	1	7
	Բնապահպանական ակցիաներ (ծառատունկ, տարածքի մաքրում և այլն)	3	170
	Ընդամենը	43	1899

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնում և կենտրոնի նախաձեռնությամբ տեղի է ունեցել **43** միջոցառում, որոնց մասնակցել են ընդհանուր թվով **1899** մարդ:

Պարբերաբար՝ յուրաքանչյուր երկուշաբթի Երևանի կենտրոնը տեղեկատվություն է ստանում ՀՀ գետերի, լճերի և ջրամբարների վիճակի և տվյալներ Սևանա լճի, ինչպես նաև առաջիկա շաբաթվա եղանակի տեսության (ներառյալ հելիոտերկրաֆիզիկական և ռադիոազդիչի քննությամբ) վերաբերյալ և այդ տեղեկատվությունը տրամադրում է մնացած կենտրոններին:

Կենտրոնը պարբերաբար տեղեկատվություն է տարածում ՀԿ-ների և ՕԿ-ների էլ. ցանցերով (էլ. լուրեր, Օրհուս կենտրոնների ամենամսյա պարբերականը, հայտարարություններ, միջոցառումների վերաբերյալ տեղեկություններ և այլն):

Ամենօրյա աշխատանք է տարվում կենտրոնի այցելուների հետ՝ տեղեկատվության, խորհրդատվության և մի շարք այլ ծառայությունների տրամադրում:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի ծառայություններից օգտվողների թիվը ըստ ծառայությունների տեսակների հետևյալն է.

Աղյուսակ2

գրադարան	տեսադարան	տպիչ	Համակարգիչ, ինտերնետ	խորհրդատվություն	Ընդամենը	տարածքի տրամադրում
137	70	418	242	237	1104	28

Կենտրոնի այցելուների թիվը կազմել է 1104 մարդ, իսկ կենտրոնի տարածքը այլ կազմակերպությունների բնապահպանական միջոցառումների անցկացման նպատակով տրամադրվել է 28 անգամ:

Հաշվետու ժամանակահատվածում վերագրանցվել է կենտրոնի գրադարանը և ֆիլմադարանը, Access ծրագրի օգնությամբ:

Կենտրոնը իրականացնում է ամենօրյա աշխատանք՝ www.aarhus.am կայքի տեղեկատվության հավաքագրում, խմբագրում, տեղադրում կայքում: Հաշվետու ժամանակահատվածում փոփոխվել է նաև կայքի բովանդակությունը և դիզայնը: Կայքը ծրագրավորվել է տեղեկատվական տեխնոլոգիաների ժամանակակից պահանջներին համապատասխան, որի շնորհիվ այն օգտագործման համար ավելի դյուրին է դարձել: Կայքի այցելուների թիվը կազմել է **91 618** (սկսած 01.07.2011):

Կենտրոնում տեղի է ունեցել Օրհուս կենտրոնների համակարգողների 5 աշխատանքային հանդիպումներ, հիմնականում հստակեցվել են գործունեության ուղղությունները, քննարկվել են տարեկան աշխատանքային պլանների ձևաչափերը և այլ կազմակերպչական հարցեր:

Նամակագրությամբ կապ է հաստատվել Օրհուսի կոնվենցիայի քարտուղարության կայքի՝ Clearinghous բլոկի հետ: Clearinghous-ը տեղեկատվության փոխանակման մի մեխանիզմ է, որտեղ ներկայացվում է տարբեր երկրներում կոնվենցիայի իրականացման գործընթացի և

շրջակա միջավայրի խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն: Յուրաքանչյուր երկիր ունի իր բլոկը: Հայաստանի հետ կապն ընդհատված էր և 2009թ-ից հետո տեղեկատվություն չկար և մեզ հաջողվեց կապ հաստատել և տեղեկատվություն տեղադրել Կապանի բաց հանքավայրի շահագործման վերաբերյալ:

<http://aarhusclearinghouse.unece.org/resources/?sortby=da&c=&c=&c=&c=1000075>

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի նախաձեռնությամբ տեղի են ունեցել էկոլոգիայի նպաստող մի շարք միջոցառումներ: Կազմակերպվել են ուսուցողական դասընթացներ ԲՈՒՀ-երի ուսանողների և դպրոցականների համար: Դասընթացներն իրականացնելու համար փորձագետներ են հրավիրվել ՀՀ բնապահպանության նախարարությունից, ինչպես նաև ՀԿ-ներից: Էկոլոգիական միջոցառումների իրականացմանը իր աջակցությունն է ցուցաբերել Կենտրոնի փորձագետների խորհրդի անդամ, «Խազեր» էկոլոգոմշակութային ՀԿ-ի նախագահ Ա. Համբարձումյանը: Կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպվել է նաև ծառատունկ Եռաբլուրում՝ Հայաստանի Ծառատունկ Ծրագրի աջակցությամբ: Այս ակցիան կարելի էր համարել հայրենասիրական բնապահպանական ակցիա, քանի որ բացի ծառատունկից իրականացվեց նաև Եռաբլուրի տարածքի մաքրման ակցիա, իսկ ծառերը տնկվեցին զոհված ազատամարտիկների անունով: Կենսաբազմազանության օրվան և Անտառների միջազգային տարվան նվիրված՝ Երևանի և Հրազդանի Օրիուս կենտրոնները, «Երիտասարդ կենսաբանների ասոցիացիա» և «Կյանքի գույներ» ՀԿ – ների հետ համատեղ՝ Հրազդանի քաղաքապետարանի աջակցությամբ, կազմակերպեցին բնապահպանական ակցիա Հրազդանի անտառտնտեսությանը պատկանող տարածքում: Կազմակերպվել են նաև այցելություններ Հայաստանի բնության թանգարան, ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի կենդանաբանական և երկրաբանական թանգարաններ:

Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել փորձագետների խորհրդի 1 նիստ: Խորհրդի նիստում քննարկվել են Երևան քաղաքի կարևորագույն էկոլոգիական հիմնախնդիրները, որոնց լուծման ուղղությամբ կենտրոնը աշխատանքներ է տանում: Մասնավորապես քննարկվել է Հրազդան գետի աղտոտվածության խնդիրները, որի ուղղությամբ Երևանի ՕԿ-ի կողմից առաջարկություններ է ուղարկվել Երևանի քաղաքապետարան: Քաղաքապետարանը պատասխանել է կենտրոնին, որ ներկայացված առաջարկությունները ընդունելի են, սակայն գումարների սղության պատճառով դրանք չեն կարող ի կատար ածվել: 2011թ. հանրային քննարկման դրվեց նաև Երևանի գլխավոր հատակագծի ճշգրտման նախագիծը: Քննարկումները նախաձեռնել էին «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպությունը Երևանի քաղաքապետարանի և «Երևաննախագիծ ինստիտուտ» ՓԲԸ հետ համատեղ, իսկ Երևանի Օրիուս կենտրոնը աջակցեց այդ քննարկումներին, ինչպես նաև առաջարկություններ ներկայացվեցին (Հրազդան գետի էկոլոգիական իրավիճակի բարելավման ուղղությամբ) հատակագծի նախագծով նախատեսված միջոցառումների ցանկում ներառման նպատակով: Ներկայումս հատակագծի նախագիծը գտնվում է քննարկման փուլում:

2011թ. կենտրոնում քննարկվել են հետևյալ թեժ էկոլոգիական հիմնախնդիրները. Ժամկետանց թունաքիմիկատները և դրանց ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, Հանքարդյունաբերության էկոլոգիական ռիսկերը, Հայաստանի անտառների պահպանության խնդիրները, ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի բնապահպանական ռիսկերը, Ուժեղ երկրաշարժերի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, Հրազդանի երկաթի հանքավայրի

հնարավոր շահագործման, Երևան քաղաքի հակաէկոլոգիական կառուցապատման, Սևանա լճի հիմնահարցերը, և այլ խնդիրներ:

Երևան քաղաքի կանաչ տարածքների պահպանության խնդիրները մշտապես կենտրոնի ուշադրության կենտրոնում են: Կենտրոնը արձագանքում է բնակիչների բողոքներին և այդ մասին տեղյակ է պահում բնապահպանական պետական տեսչությանը և Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչությանը: Երևան քաղաքում ընթացող քաղաքաշինության հետևանքով քաղաքում կրճատվում են կանաչ տարածքները և իհարկե դրա ազդեցությունը քաղաքի շրջակա միջավայրի վրա, հատկապես օդային ավազանի աղտոտվածության վրա հսկայական է: Կառուցապատման հետևանքով առաջանում են նաև մի շարք այլ խնդիրներ՝ ավելանում են խցանումները, խախտվում է քաղաքի պատմամշակութային տեսքը, ավելանում են սեյսմիկ ռիսկերը, ինչպես նաև առաջ են գալիս առողջապահական խնդիրներ:

Վերոնշյալ խնդիրների շուրջ կենտրոնի և մի շարք ՀԿ-ների կողմից նամակ ուղղվեց ՀՀ նախագահին, դիմելով նրան, որպես սահմանադրության երաշխավորի և գործադիր իշխանության ղեկավարի, ազդել ՀՀ կառավարության և Երևանի քաղաքապետարանի վրա, որպեսզի վերջիններս վերանայեն հանրային գերակա շահ ճանաչված մի քանի կառույցների վերաբերյալ ընդունված որոշումները:

Առաջարկներ են ներկայացվել Ազգային ժողով «ՀՀ ջրային օրենսգրքի մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի և ՀՀ բնապահպանության նախարարություն «Շրջակա միջավայրի պահպանության մասին» ՀՀ օրենսգրքի նախագծի հայեցակարգային մոտեցումներ» ՀՀ կառավարության արձանագրային նախագծերի վերաբերյալ:

2011թ. Քաունթերփարթ ինթերնեշնլ կազմակերպության Հայաստանյան ներկայացչության կողմից իրականացվեց մի նախաձեռնություն, որի անվանումն էր [«Օրենսդրական նախաձեռնությունների քննարկման օր ՀՀ Ազգային ժողովում»](#) և նպատակն էր քաղաքացիական հասարակության ներգրավումը օրենսդրական առաջարկությունների մշակմանը: Նախաձեռնությունը ուներ մի քանի ուղղվածություն և բնապահպանական ուղղվածությունը համակարգվեց Երևանի Օրհուս կենտրոնի կողմից:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի աշխատակիցները մասնակցել են բազմաթիվ հանդիպումների, քննարկումների, սեմինարների և կոնֆերանսների, համալրել իրենց գիտելիքները Շրջակա միջավայրի հարցերի շուրջ: Կենտրոնը ակտիվ համագործակցում է շրջակա միջավայրի պահպանության հարցերով զբաղվող միջազգային, պետական և ոչ պետական կառույցների, գիտական, բիզնես և ԶԼՄ սեկտորի ներկայացուցիչների հետ: Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի գործունեության վերաբերյալ լուսաբանումներ են եղել մի շարք հեռուստաընկերություններով, Հանրային ռադիոյով, կայքերով և այլ լրատվամիջոցներով:

Կենտրոնի գործունեությունը մանրամասն ներկայացվում է www.aarhus.am կայքում:

Միլվա Այվազյան
Երևանի Օրհուս կենտրոնի համակարգող
Հեռ. /374 10/ 55-13-64
E-mail: info@aarhus.am